ԼՂԻՄ-ԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմանը համապատասխան, Հայաստանի կոմկուսի Կենտկոմը և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը մշակել են ԼՂԻՄ-ին օգնություն ցույց տալու միջոցառումների պլան, մասնավորապես՝ բնակելի տների, սոցիալ-կուլտուրական և արդյունաբերական օբյեկտների, ավտոճանապարհների շինարարության ծավալման և բնակավայրերի գազիֆիկացման գործում:

Հաշվի առնելով ձմռան մոտենալը, որոշում է ընդունվել այս տարի Լեռնային Ղարաբաղում կոտեջային տիպի ավելի քան հարյուր բնակելի տուն կառուցել Սումգայիթից գաղթածների համար: Այդ խնդրի կատարման նպատակով նոյեմբերի 7-ին կազմվեց 40 ծանր բեռնատար ավտոմեքենաներից բաղկացած մի ավտոշարասյուն, որը նույն օրը Լեռնային Ղարաբաղ հասցրեց շինարարական տեխնիկա, սարքավորումներ, մեխանիզմներ, շինանյութեր ու շինարարական կոնստրուկցիաներ:

Նոյեմբերի 9-ին ԼՂԻՄ ուղարկվեց նույնպիսի բեռներով ևս մեկ մեծ ավտոշարասյուն:

«Արթիկտուֆ» միավորման աշխատավորական կոլեկտիվի ժողովում միահամուռ որոշում ընդունվեց. աշխատելով երկարացված գրաֆիկով և հանգստյան ու տոն օրերին, ապահովել լրացուցիչ արտադրանք՝ ԼՂԻՄ-ին օրական 4—5 վագոն քար ուղարկելու համար: Նախատեսված օբյեկտների շինարարությունը ժամանակին ավարտելու համար Լեռնային Ղարաբաղի համապատասխան կազմակերպությունները կապահովվեն ցեմենտով ու ասբոշիֆերային արտադրանքով:

Նախատեսված ծրագրի իրականացման աշխատանքը գտնվում է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և հանրապետության կառավարության մշտական հսկողության ներքո: